# 52 ՏԱՐԻ՝ ՕԳՏԱԿԱՐ ԼԻՆԵԼՈՒ ՁԱՆԿՈՒԹՅԱՄԲ






**«Կամավորությունը օգտակար լինելու ձանկություն է, այն պետք է լինի մարդու հոգու և սրտի մեջ»: Մարդկային այս կարևորագույն հատկանիշը աշխարհով մեկ տարածող կառույցներից մեկն է Հայաստանի ուսանողական ջոկատների Հանրապետական շտաբը, և այն կա՝ ավելի քան 50 տարի:**



***Ստեփան Ստեփանյան,***
***Վարչության նախագահ***

Կազմակերպությունը երկու տարի առաջ տոնեց իր 50-ամյա հոբելյանը: Այն շատ մեծ կենսագրություն և պատմություն ունի: Դեռ խորհրդային տարիներին մեր ուսանողական ջոկատները մասնակցել են Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող, խոշոր կառույցների՝ Արփա-Սևան թունելի, Մեծամորի ատոմակայանի, Երևանի մետրոպոլիտենի, Զվարթնոց օդանավակայանի, Նաիրիտ գիտաարտադրական միավորման, Մարզահամերգային համալիրի, Հրազդան մարզադաշտի և շատ այլ խոշոր ու լուրջ շինարարական աշխատանքներին, ինչպես նաև ողջ Միության տարածքում կենսական նշանակություն ունեցող օբյեկտների կառուցման գործին: 1992 թվականից ուսանողական ջոկատների շտաբը սկսեց լրջորեն և մեծ մասշտաբով զբաղվել կամավորական աշխատանքներով, հայ կամավորներին արտասահմանյան ճամբարներ ուղարկելով և արտասահմանից ժամանող կամավորներին ընդունելով: 52 տարվա ընթացքում մոտ 250000 հայ ուսանողներ մասնակցել են ուսանողական ջոկատների և կամավորական շարժմանը:



***Անի Մանուկյան,***
***ՀՈՒՋ միջազգային***
***ծրագրերի համակարգող***

Կազմակերպվում է տարեկան ավելի քան 300 հայ կամավորների մասնակցությունը արտասահմանյան միջազգային կամավորական ծրագրերին, որոնք տևում են 2-3 շաբաթ: Կամավորների փոխանակման ծրագրեր շտաբը կազմակերպում է ավելի քան 120 արտերկրյա կազմակերպությունների հետ: Ճամբարներում իրականացվում են բնապահպանական, շինարարական, նորոգման, սոցիալական, մշակութային, փառատոների ու մասսայական միջոցառումների կազմակերպման, հնագիտական, գեղագիտական, երեխաների զարգացման ծրագրեր: Ճամբարականները ապրում են միևնույն հարկի տակ, աշխատում և անցկացնում են նախօրոք պլանավորված ազատ ժամանցը: Որոշ ճամբարներում նաև շրջագայում են քաղաքից քաղաք, ձեռք բերում մշակութային ճանաչողություն և արտասահմանցի ընկերներ, բարելավում են լեզուների իմացությունը, լայնացնում մտահորիզոնը և զարգացնում ստեղծագործ միտքը:





***Երեմ Ստեփանյան,***
***ՀՈՒՋ պատասխանատու քարտուղար***

Ամեն տարի Հայաստանում բացվում են 10 կամավորական աշխատանքի միջազգային ճամբարներ, որտեղ հայ և արտասահմանցի կամավորները կատարում են վերականգնողական, էկոլոգիական, երեխաների հետ էսթետիկական դաստիարակչական աշխատանքներ, կազմակերպում հիվանդ և ծնողազուրկ երեխաների հետ համերգ-ներկայացումներ, բեմադրություններ, խաղեր: Հայաստանի հանդեպ մեծ հետաքրքրության պատճառները շատ են՝ կացարանային բարենպաստ պայմանները, ազգային կերակրատեսակներով համեղ ու բազմազան սնունդը, բազմապրոֆիլ աշխատանքները և հագեցած էքսկուրսիոն-մշակութային ծրագրերը: Շտաբը կազմակերպում է սեմինարներ, թրեյնինգներ, որոնք նպաստում են միջմշակութային երկխոսության կայացմանը: Տարվա ընթացքում 5 միջազգային սեմինար և թրեյնինգ է Հայաստանում իրականացվել «Էրազմուս պլյուս» ծրագրի շրջանակներում: Այս ոչ ֆորմալ կրթական ծրագրերը բարձրացնում են ակտիվ և ոչ անտարբեր երիտասարդների ինքնագիտակցությունը, վստահություն ներշնչում, որ իրենք կարող են բարելավել ոչ միայն սեփական, այլև ուրիշների կյանքը:



***Աննա Բարիկյան,***
***ՀՈՒՋ միջազգային***
***ծրագրերի համակարգող***

Շտաբը համակարգում է Հայաստանում «Էրազմուս պլյուս» ծրագրի շրջանակներում Եվրոպական կամավորական ծառայության (EVS) ու Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության Weltwarts զարգացման կամավորական ծառայության ծրագրերը՝ մինչև 1 տարով Հայաստանում ընդունելով տարեկան 15-20 կամավորներ Եվրոպական երկրներից: Նույն ծրագրերի շրջանակներում Շտաբն արտասահման է ուղարկում հայ կամավորներին՝ 1 տարի կամավորական աշխատանքներ իրականացնելու նպատակով:

Նրանք աշխատում են ծնողազուրկ, հաշմանդամ և հիվանդ երեխաների, անապահով ընտանիքների հետ՝ կազմակերպելով նրանց ազատ ժամանցը և խնամքը, իրականացնելով գեղագիտական և էկոլոգիական ծրագրեր:



